



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Անահիտ Զաքարյան

Մանկապարտեզ՝ «ՆԱՆԵ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	5
Հետազոտության ընթացքը	8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	10
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հիմնական ուղղություններից ելնելով՝ մանկապարտեզում իրականացվող տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքներն իրականացվում են որոշակի համակարգով՝ երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, ուսուցանվող նյութի բովանդակության աստիճանական հաջորդական բարդացման միջոցով: Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները բխում են խմբի տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրային խնդիրների պահանջներից մինչև թվային հասկացությունների ամրապնդում, 10-ի սահմանում քանակական և կարգային համրանք, 10-ի սահմանում թվերի համեմատում և կազմություն, պարզ խնդիրներ կազմում և երկրաչափական պատկերների մասին նախագիտելիքներ: Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները՝ տիրապետում են ծրագրով նախատեսված որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել ինքնաբուխ խաղերի, մեծերի հետ ամենօրյա հաղորդակցման ինքնուրույն գործունեության միջոցով: Յուրաքանչյուր պարապմունքին դաստիարակին առաջադրված է կիրառել զանազան մեթոդներ՝ բառային, դիտողական, գործնական, խաղային, գրաֆիկական, իսկ առաջադրվող դիդակտիկ (զննական, բաշխիչ) նյութերը միջոց են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Պարապմունքի կազմակերպման արդյունավետ ճանապարհը՝ խաղային, սյուժետային նյութով՝ ուսուցման կիրառումն է, սակայն նպատակահարմար չէ ոգևորվել ավելորդ սյուժետային իրավիճակների ստեղծմամբ: Դիդակտիկ խաղերը ընդգրկվում են պարապմունքի բովանդակության մեջ՝ որպես ծրագրային խնդիրների իրականացման միջոց: Խաղային առաջադրանքների

միջոցով երեխաները հեշտությամբ են յուրացնում մաթեմատիկական հասկացությունները, կիսվում են ստացած գիտելիք

ներով, խաղային գործունեության միջոցով ճշտվում և ամրապնդվում են նրանց պատկերացումները՝ թվերի, դրանց փոխադարձ կապի, երկրաչափական պատկերների, ժամանակի և տարածության մասին:

Աշխատանքի նպատակն է՝ բացահայտել տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում:

Աշխատանքի վարկածը: Ենթադրվում է, որ նախադպրոցական տարիքում երեխան պետք է ունենա տարրական մաթեմատիկական պատկերացումներ:

Հետազոտության ընթացքը: Հետազոտությունը անց ենք կացրել 16 սանի հետ: Հետազոտության համար կիրառել ենք երկրաչափական պատկերներով գլուխկոտրուկներ:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է մասերից, ներածությունից, տեսական և հետազոտական մասերից, եզրակցությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Երեխաների տարածական պատկերացումները սկսում են ձևավորվել շատ վաղ հասակից, տարածության մեջ կողմնորոշվում են զգայական համակարգի միջոցով: Տարածական պատկերացումների և տարածական կողմնորոշման ունակությունների ձևավորմանը մասնակցում են տարբեր օրգաններ, սակայն կարևոր դեր է խաղում տեսողական օրգանները: Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է տարածական կողմնորոշման համակարգի որոշ բաղադրիչներին՝ «առջև», «հետև», «վերև», «ներքև», «աջ», «ձախ»:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում ունի հիմնական հետևյալ նպատակները.

Նախադպրոցականին նախապատրաստել դպրոցին սովորեցնելով հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծության հատկանիշերը, երկրաչափական պատկաները, նպաստել հոգեկան գործընթացների և հատկապես մտածողության (համեմատություն, վերլուծություն, ընդհանրացում) զարգացմանը:

Նախակրթարանի մաթեմատիկական գիտելիքները երեխայի մտավոր զարգացման մեջ անմիջականորեն կարևոր դեր են խաղում: Մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ երեխաները սովորում են՝ վերլուծել, համեմատել, սինթեզել, կատարել հաշվարկային գործողություններ, տրամաբանորեն մտածել, տարբերակել երկրաչափական թվերը, կողմնորոշվել տարածության մեջ: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում է հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը: Մանկապարտեզում ստացած գիտելիքները երեխաները կիրառում են առօրյա կյանքում: Այդ պատճառով էլ մանկավարժի խնդիրն է՝ երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնել կրթական գործունեության նկատմամբ, տալ անհրաժեշտ տարրական մաթեմատիկական գիտելիքներ, երեխաներին տանել ինքնուրույն պատասխաններ և լուծումներ

փնտրելու:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման գործընթացում մանկավարժը օգտագործում է ուսուցման տարբեր մեթոդներ:

- 1.գործնական,
- 2.տեսողական,
- 3.բանավոր,
- 4.խաղային.

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդները:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեջ առաջատար դեր է խաղում գործնական մեթոդը: Այս մեթոդի էությունը երեխաների գործնական գործունեության կազմակերպումն է, որն ուղղված է առարկաների կամ դրանց փոխարինողների հետ գործողությունների եղանակների յուրացմանը (նկարներ, գրաֆիկական նկարներ, մոդելներ եւ այլն):

Գործնական մեթոդի բնորոշ առանձնահատկությունները տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման ժամանակ:

- տարբեր գործնական գործողությունների իրականացում,
- դիդակտիկ նյութի լայն օգտագործումը,
- ներկայացումների առաջացումը որպես դիդակտիկ նյութի գործնական գործողությունների արդյունք,
- հաշվի հմտությունների մշակում, չափում և հաշվարկում ամենատարրական ձևով,
- ձևավորված պատկերացումների և կենցաղում, խաղում, աշխատանքում յուրացված գործողությունների լայն կիրառում, այսինքն ` գործունեության տարբեր ձևերում:

Այս մեթոդը ենթադրում է հատուկ վարժությունների կազմակերպում, որոնք կարող են առաջարկվել առաջադրանքի ձևով, կազմակերպվել որպես ցուցադրական նյութով գործողություններ կամ ընթանալ բաժանվող դիդակտիկ նյութի հետ ինքնուրույն աշխատանքի ձևով :

Վարժությունները լինում են կոլեկտիվ կատարվում են բոլոր երեխաների հետ կամ անհատական: Կոլեկտիվ վարժությունները, բացի գիտելիքների յուրացումից և ամրապնդումից, կարող են օգտագործվել վերահսկողության համար:

Խաղի տարրերը ներառվում են բոլոր տարիքային խմբերի վարժություններում. «կրտսեր»՝ անակնկալ պահի, իմիտացիոն շարժումների, հեքիաթային բնույթի և այլն: Ավագների մեջ նրանք ձեռք են բերում որոնման բնույթ, մրցույթներ: Երեխաների ակտիվության, ինքնուրույնության, կատարման գործընթացում ստեղծագործական դրսևորման տեսանկյունից կարելի է առանձնացնել վերարտադրողական (նմանակող) և արդյունավետ վարժություններ:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման բոլոր դիդակտիկ խաղերը բաժանված են մի քանի խմբերի:

1. Խաղեր թվերի
2. Խաղեր ժամանակի ճանապարհորդության
3. Խաղեր տարածության մեջ կողմնորոշման
4. Խաղեր երկրաչափական մարմինների հետ
5. Տրամաբանական մտածողության խաղեր

«Տարրական» մաթեմատիկական պատկերացումների ձևավորման տեսողական և բանավոր մեթոդները ինքնուրույն չեն, դրանք համապատասխանում են գործնական և խաղային մեթոդներին:

Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդներ:

1. Ցուցադրումը ուսուցման հիմնական ընդունելությունն է, այն կրում է տեսողական-գործնական բնույթ, կատարվում է տարբեր դիդակտիկ միջոցների ներգրավմամբ, հնարավորություն է տալիս ձևավորել երեխաների հմտություններն ու կարողությունները: Դրան ներկայացվում են հետևյալ պահանջները:

- գործողության մեթոդների ցուցադրման հստակություն, մասնատվածություն,
- բանավոր բացատրությունների հետ գործողությունների համաձայնեցում,
- ցուցադրությանը ուղեկցող խոսքի ճշգրտությունը, կարճությունն ու արտահայտչականությունը:

- երեխաների ընկալման, մտածողության և խոսքի ակտիվացում:

2. Հրահանգ:

Հրահանգներով ինքնուրույն վարժություններ կատարել: Հրահանգներում արտացոլվում է, թե ինչ և ինչպես պետք է անել, որպեսզի ստանալ անհրաժեշտ արդյունքը. Ավագ խմբերում հրահանգը տրվում է ամբողջությամբ, նախքան առաջադրանքը սկսելը, իսկ կրտսեր խմբում հրահանգը տրվում է յուրաքանչյուր նոր գործողության համար:

3. Պարզաբանումներ, ցուցումներ:

Սրանք օգտագործվում է ուսուցչի կողմից, երբ ցուցադրվում է գործողության եղանակը՝ երեխաների հանձնարարությունը կատարելու ընթացքում, սխալները կանխելու, դժվարությունները հաղթահարելու նպատակով: Դրանք պետք է լինեն կոնկրետ, և կարճ:

Ցուցադրումը տեղին է բոլոր տարիքային խմբերում նոր գործողությունների (հավելված, չափում) ծանոթանալիս, բայց միաժամանակ անհրաժեշտ է մտավոր գործունեության ակտիվացումը, որը բացառում է ուղղակի ընդօրինակումը:

Գործողության յուրացումը և կատարելագործումը իրականացվում է բանավոր մեթոդների ազդեցության ներքո՝ բացատրություններ, ցուցումներ, հարցեր:

Հետազոտության ընթացքը

Թեմա–«Երկրաչափական քաղաքում»

Ուսումնական բնագավառ–Տարրական մաթեմատիկական պատկերացումներ

Նպատակ– Երեխան կարողանա շրջապատում ճանաչի և գտնի առնվազն 4 երկրաչափական մարմիններ: Կարողանա հավաքի գլուխկոտրուկ՝ մասերից

ստանալով ամբողջությունն: Կորիզներով հաշվել գլուխկոտրուկի կտորները: Վերցնելով մեկ երկրաչափական պատկեր և գտնի իր տեղը խմբում:

Անհրաժեշտ նյութեր՝ մեծ չափերի երկրաչափական մարմիններ, թղթից (շրջան, քառանկյուն, եռանկյուն, ուղղանկյուն): Երեխաների քանակով ծրարի մեջ գլուխկոտրուկներ: Կորիզներ: Թղթից և փայտից երկրաչափական մարմիններ:

Խթանման փուլ

Նկարել տնակ, որը ունի տանիք: Կանչել 4-5 երեխա՝ նկարեն երկրաչափական պատկերներով լուսամուտներ, դուռ, տանիք:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաներին նստեցնել սեղանի շուրջ, տալ ծրարներով գլուխկոտրուկներ:

Առաջադրանք՝

Ծրարից հանում ենք գլուխկոտրուկի կտորները և շարում սեղանի վրա: Հաշվում ենք քանի կտոր կա և ինչ պատկեր ստացանք:

Կշռադատման փուլ

Հարցնել երեխաներին. Ի՞նչ արեցինք, ի՞նչ պատկերներ ստացանք:

Խմբասենյակում գետնին դրված են թղթից երկրաչափական պատկերներ: Նախօրոք սկուտեղի վրա դրված երկրաչափական պատկերներից վերցնելով երեխաները գտնում են իրենց տեղը խմբասենյակում:

Վերջնարդյունք

Երեխաները կարողանան շրջապատում հայտնաբերեն երկրաչափական պատկերների նկարներ: Ստողծեն մասերից ամբողջական պատկերներ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դիտարկելով դաստիարակի կողմից անցկացրած պարապմունքը հանգեցինք այն եզրակացություններին, որ

- Աշխատանքները ուղղված էին ճանաչողական, վերլուծական, համադրական կարողությունների զարգացմանը:

- Երեխաները իրենց զգում էին շատ լավ, բավարարված, նրանց համար հետաքրքիր էր գլուխկոտրուկների հավաքումը:
- Ընտրված թեման անշուշտ կարևոր է ներկայիս նախադպրոցական կրթության մեջ, քանզի երեխաների ճանաչողական կարողությունների և հմտությունների վրա է հիմնված նրանց հետագա ողջ ուսումնառությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կարևորեցինք երեխաների մեջ ճանաչողական և համադական կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Պարապմունքի ավարտին հասանք մեր առջև դրված նպատակներին, այն է՝ բացահայտել տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում:

Հաշվի առնելով երեխաների դեռ ոչ բավարար չափով զարգացած համադրելու կարողությունը և դրանից բխող դժվարությունները, մենք խորհուրդ կտանք ավելի շատ նման վարժությունների համալիր անցկացնել երեխաների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Չիբուխյան Ս.Ա. «Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2014:
2. Վերդյան Լ., Աշխատանքային կենտրոնները և դրանց դերը նախադպրոցականի բազմակողմանի զարգացման գործում, «Նախաշավիղ», Երևան, 2016/6, 65 էջ: